



ԷՄՄ. ՎՐԴ.

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՔ-ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ԱՍԱՏՈՒՐ ՍԱՐԵԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ԱՄԵՆԱՅՆ ԲԱՆ ՏԳԵՂ Ի ԲԵՐԱՆՈՅ ՁԵՐՄԷ ՄԻ՛ ԵԼՑԷ (ՆԱՅՈՅՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ)¹

Մարդուն շնորհուած բարիքներից առաւել անգինն ու բարձրագոյնը բանականութիւնն է: Բանականութիւնն է, որ մարդուն զատում է բոլոր մնացեալներից: Բանականութեամբ է, որ մարդուն ընծայում է Աստծու պատկերով ստեղծուած լինելու պատիւը: Բանականութիւնը մարդուն դարձնում է ոչ միայն տեսնող եւ զգացող էակ, այլ՝ մտածող, ընտրող եւ պատասխանատու. շնորհ, որով մարդը կարող է տարբերակել բարին չարից, ճշմարիտը կեղծից եւ ընթանալ արահետով արդարութեան: Բանականութեան միջոցով է, որ մարդը կարողանում է ճանաչել Արարչին, մտորել Նրա խորհուրդների մասին, խօսել, փառաբանել ու դիմել Նրան աղերսով, աղօթքով, տաղ ու շարականով: Բանականութիւնը մարդուն շնորհուած անգնահատելի պարգեւ է, բայց եթէ մարդը չգիտակցի այդ արժէքը, չպահի ու չփաշփայի իր բանականութեան սրբութիւնը, եթէ առաքինութիւնը մթազնի ցասումով, հայհոյանքով, սուտ ու խաբեպատիր մտքերով կամ մեղաւոր հպարտութեամբ, ապա նա պարզապէս կզրկուի իր բարձր կոշտմից՝ պղծելով այն պատկերն ու նմանութիւնը, որով Աս-

¹* Ստացուել է՝ 2.02.2025, գրախօսուել է՝ 3.03.2025:

էլ. հասցէ՝ targmanich1@mail.ru, asa-saryan@yandex.com : Բուն յօդուածը պատրաստուել է անգլերէն՝ օտարալեզու պարբերականում հրատարակելու նպատակով: Այստեղ ներկայացնում ենք լոկ որոշ դրոյթներ, որ առաւելաբար շեշտուած չեն բուն աշխատանքում:

տուած պատուեց իրեն արարման առաջին իսկ պահից²: Այս երեւոյթը Հայկազեան բառարանի մեկնութեամբ ներկայացուած է բանական՝ «տրամաբանող, մտաւոր, իմացական եւ խօսում» լինելու հանգամանքով: Սրան հակադիր են Բառգրքի անբանական «Սեպհական անբանից կամ անբանութեան, զգայական» եւ Անբանաւամ «Իբրեւ անբան լինել, արտաքոյ ելանել բանի, անմտանալ» յօդուածների արտայայտած գաղափարները³, որոնցում մշտապէս կրկնուող արմատը բանն է՝ «խօսք, շարք բառից բերանով բարբառեալ»⁴ նշանակութեամբ: Կամքի ազատութեան հանգամանքով մարդն ազատ է իմացածի եւ խօսածի ընտրութեան մէջ: Կարող է խորհել եւ՝ վառ ու լուսաւորի մասին, եւ՝ խաւար ու ճղճիմ նիւթերի: Կարող է շուրթերը բացել աղօթքով, գոհաբանութեամբ եւ օրհնութեամբ եւ կարող է բերանն ապականել բամբասանքով, վայրահաշուութեամբ, հայհոյանքով, որ հակադիր է օրհնութեանը, խոնարհութեանը եւ սրբութեան զգացումին, որոնք քրիստոնէական կեանքի հիմքերից են: Այդ պատճառով հայհոյանքը սոսկ բանաւոր «զանցանք» չէ, այլ հոգեւոր խաթարում, որի ընթացքին մարդը ժողովում է իր սրտի խորքերում կուտակուած մոպսութիւնը եւ արձակում Աստծու պատկերով ստեղծուած մէկ այլ էակի ուղղութեամբ: Նման խօսքն աղտոտում է ոչ միայն դա լսողներին, այլ նախեւառաջ՝ արտաբերողին՝ նրան զրկելով բարեշնորհ խօսքի զօրութիւնից: Ուստի քրիստոնեայի կեանքում հայհոյանքը ոչ միայն անպատշաճ է, այլ հակասում է մարդու աստուածանման բնոյթին եւ էութեանը: Ըստ Աւետարանի մարդը կոչուած է օրհնելու, աղօթելու եւ Աստծու ողորմութիւնը հայցելու եւ փոխանցելու իր նմաններին, ոչ թէ կործանարար խօսքեր սփռելու, այլ խաղաղութեան եւ յոյսի, նոյնիսկ եթէ դիմացինը զազրախօս պղծաշուրթ է: Սրա համար է Պետրոս առաքեալն ասում. «Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել, կամ բամբասանս ընդ բամբասանաց. այլ զնորին հակառակն՝ օրհնէ՛, զի յայն իսկ կոչեցարուք՝ զի զօրհնութիւնն ժառանգիցէք: Զի որ կամի զկեանս սիրել, եւ զաւուրս իւր տեսանել ի բարութեան, լռեցուցէ՛ զլեզու իւր ի չարութենէ, եւ զշրթունս իւր ի չխօսելոյ՝ զնենգութիւն. խոտորեացի՛ ի չարէ, եւ արասցէ՛ զբարի. խնդրեաց՛ զխաղաղութիւն,

² Հմմտ. H. MERCIER, D. SPERBER, Why do humans reason? Arguments for an argumentative theory, «Behavioral and Brain Sciences», 2011, հ. 34, էջ 57–111, յատկապէս 62–65-ը, «Dignity, Freedom and Justice», Ed. R. Gotoh, Springer Nature Singapore, 2024, 3–10:

³ Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1836–1837:

⁴ Տե՛ս համապատասխան բառայօդուածը:

եւ երթիցէ՛ զհետ նորա: Զի աչք Տեառն ի վերայ արդարոց, եւ ականջք Նորայ յաղօթն նոցա, երեւք Տեառն ի վերայ չարագործաց» (Ա. Պետր., Գ. 9): Ըստ սրբազան հայրերի՝ զուսպ լեզուն, աղօթքով եւ երկիւղով լեցուն միտքը զտուժ ու սրբում են մարդու սիրտը՝ նրան նմանեցնելով ու մօտեցնելով Արարչին, հակառակ հայհոյախօս չարակամութեան, որ ապականում է հոգին, մթազնում բանականութիւնը՝ հեռացնելով աստուածային շնորհից: Ուստի բնական է, որ սուրբ Ներսէս Շնորհալու աղօթքով սահմանուում է. «Ամենախնամ Տէր, դիր պահապան աչաց իմոց գերկիւղ Քո սուրբ, ո՛չ եւս հայիլ յայրատ, եւ ականջաց իմոց՝ ո՛չ ախորժել լսել զբանս շարութեան, եւ բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսել զստաութիւն, եւ սրտի իմոյ՝ ո՛չ խորհել զչարութիւն, եւ ձեռաց իմոց՝ ո՛չ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց՝ ո՛չ գնալ ի ճանապարհս անօրէնութեան, այլ ուղղեա՛ զչարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց Քոց յամենայնի. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ բազմամեղիս... Իմաստութիւն Հօր Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի Քո յամենայն ժամ. ի շար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛ զիս. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ բազմամեղիս (Թ., ԺԱ.): Մեծ պահոց աղօթքում սուրբ Եփրեմ Ասորին աղերսում է. «Ո՛վ Տէր եւ Տիրակալ իմ կենաց, մի՛ շնորհիր ինձ անբանութեան, յուսահատութեան, փառասիրութեան եւ դատարկախօսութեան ոգի, այլ՝ մաքրութեան, խոնարհութեան, եւ համբերութեան ոգի ու սէր ընծայիր ինձ՝ Քո ծառային»⁵: Սուրբ Յովհան Ոսկեբերանն ուսուցանում է հաւատացեալին. «Թող աչքդ չար բանի չնայի, եւ դա պատարագ կդիտուի: Թող լեզուդ անպարկեշտ բան չխօսի, եւ դա պատարագ կդիտուի: Թող ձեռքդ անօրինութիւն չգործի, եւ դա պատարագ կդիտուի»⁶: Բնականաբար շար խօսքի, զազրախօսութեան եւ հայհոյանքի հանդէպ նման վերաբերմունքը գալիս է Աստուածաշնչից, որտեղ տարբեր առիթներով յիշուում են զազրախօսութիւնն ու հայհոյանքը, եւ ընդգծուում է երեւոյթի բացասական հանգամանքը: Ահա Եփեսացիներում կարդում ենք. «Ամենայն բան տգեղ ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ. այլ որ ինչ բարին է, ի շինած պիտոյից. զի տացէ շնորհս այնոցիկ, որ լսենն» (Եփես. Գ. 29): Այստեղ մենք սովորում ենք, որ մերժելի է, երբ տգեղ խօսք է դուրս գալիս մարդու բերանից: Կողոսացիներում ասուած է. «Արդ՝ ի բայց թօթափեցէք եւ դուք զայն

⁵ Հմմտ. <https://orthodox-europe.org/english/liturgics/prayers/prayer-of-st-ephrem/>:

⁶ Տե՛ս <https://biblehub.com/commentaries/chrysostom/romans/12.htm>:

ամենայն, զբարկութիւն, զսրտմտութիւն, զշարութիւն, զհայհոյութիւն, զխեղկատակութիւն ի բերանոց ձերոց: Մի՛ ստէք միմեանց. մերկացարո՛ւք զհին մարդն գործովքն իւրովք» (Կողոս. Գ. 8): Ինչպէս տեսնում ենք սրբազան հեղինակը յորդորում է թօթափել բարկութիւնն ու շարութիւնը, հայհոյութիւնն ու խեղկատակութիւնը, որոնք մարդուն հեռացնում են աստուածանման պատկեր լինելու հանգամանքից: Սուրբգրական միւս քաղուածը «Թուղթ սրբոյ առաքելոյն Յակովբայ» հատուածից է, ուր նոյնպէս արծարծուած է խնդրոյ առարկայ նիւթը. «Ի նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք եւ անէծք. ո՛չ է պարտ եղբարք իմ այսմ այսպէս լինել: Միթէ՛ աղբէ՛ր անտստին ի միոյ ականէ բղխիցէ քաղցր եւ դառն: Միթէ՛ մա՛րթ ինչ իցէ եղբա՛րք իմ՝ թգենւոյ ձէթ բերել, կամ որթոյ թուզ, եւ ո՛չ աղտաղտին տեղւոյ ջուր քաղցր առնել: Ո՛վ իցէ իմաստուն եւ հանճարեղ ի ձեզ, ցուցցէ՛ ի բարւոք գնացից իւրոց զգործս իւր հեզութեանմբ իմաստութեան: Ապա թէ նախանձ՝ եւ դառնութիւն եւ հակառակութիւն ունիցիք ի սիրտս ձեր, մի՛ պարծիք սուտ առնել զճշմարտութիւն: Ո՛չ է իմաստութիւնս այս իջեալ ի վերուստ. այլ երկրաւոր՝ շնչաւոր՝ եւ դիւական» (Յակովբոս Գ. 9): Առաքեալը ներկայացնում է, որ արեւի տակ եղած «գազանների, թռչունների եւ սողունների ամեն տեսակ ինչպէս եւ ծովի մէջ եղածները հնազանդուած են մարդկային բնութեանը, բայց մարդկանց լեզուն՝ այդ շարը, անգսպելին եւ մահաբեր թոյնով լցուածը, ոչ ոք չի կարող հնազանդեցնել: Նրանով օրհնում ենք Տիրոջը եւ Հօրը եւ նրանով անիծում ենք մարդկանց, որ ստեղծուեցին Աստծու նմանութեանը: Նոյն բերանից դուրս են գալիս օրհնութիւններ եւ անէծքներ: Ուստի Յակովբոսը յորդորում է. «Եղբայրներ իմ, պէտք չէ, որ այդ այդպէս լինի: Միթէ՛ մի աղբիւր նոյն ակից քաղցր եւ դառն ջուր կբխեցնի, միթէ՛ հնարաւոր է, որ թգենին ձիթապտուղ տայ կամ որթատունկը՝ թուզ»:

Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ընտրութեան շնորհիւ գրեթէ ողջ հայ ազգն անգիր գիտէ. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ. իմանալ զբանս հանճարոյ» բանատողը: Դրան անշուշտ հարազատ է Սիրաքի յաջորդող նախադասութիւնը, որ առանձնակի կարեւորութիւն է ձեռք բերում այսօր՝ հպարտացեալ, հայհոյիչ եւ անօրէն անձանց սպառնալով կործանմամբ. «Զխրատ իմաստութեան լուարո՛ւք, եւ որ պահեսցէ զնա՝ մի՛ կործանեսցի շրթամբք: Հպարտն եւ հայհոյիչն եւ անօրէնն կործանեսցին» (Սիրաք ԻԳ. 15): Եւ այս միտքը թերեւս պէտք է ընկալուի առ Կորնթացիան թղթի շարակարգում, ուր ասուած է. «Ո՛չ գիտէք եթէ տաճար էք Աստուծոյ,

եւ Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ: Եթէ որ զտաճար Աստուծոյ ապականէ, ապականեսցէ՛ զնա Աստուած. զի տաճար Աստուծոյ սո՛ւրբ է, որ էք դո՛ւք» (Գ. 16): Արդէն Մատթէոսի աւետարանից պէտք է ընկալենք Որդի Աստծու խօսքերը. «Ասէ՛ Յիսուս. Տակաւին՝ եւ դո՛ւք անմիտք էք, եւ ո՛չ իմանայք. եթէ ամենայն որ մտանէ ի բերան, յորովայն երթայ՝ եւ արտա՛քս ելանէ: Իսկ որ ելանէ ի բերանոյ՝ ի սրտէ՛ անտի գայ. եւ ա՛յն պղծէ զմարդ: Զի ի սրտէ՛ ելանեն խորհուրդք չարք, սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք» (Մատթ. ԺԵ. 16): Աստուածաշնչեան շատ հատուածներ, որոնցում առկայ է «հայհոյել» բառն իր տարբերակներով հնարաւոր է փորձ արուի մեկնելու յատկապէս այն տեսանկիւնից, թէ միայն Աստծու դէմ ուղղուած խօսքերի պարագային է դա վերաբերելի, մինչդեռ սուրբգրական խօսքերը նման երանգ չեն կարող ընդունել, որ հայհոյութիւնը բացասաբար դիտարկուի միայն գերագոյն սրբութիւններին ուղղուելիս: Անշուշտ բարդ եւ խրթին կարող է ներկայանալ Յովհաննէս առաքեալի Յայտնութեան հատուածը, ուր եւս անդրադարձ կայ հայհոյութեանը. «Եւ տուաւ նմա (գազանին) բերան խօսել զմեծամեծս, եւ զհայհոյութիւն. եւ տուաւ նմա իշխանութիւն զամիսս քառասուն եւ երկու: Եւ եբաց զբերան իւր հայհոյութեամբ առ Աստուած, եւ հայհոյեաց զանուն Նորա՝ եւ զխորանն Նորա, եւ զերկնային խորանն: Եւ տուաւ նմա իշխանութիւն ի վերայ ամենայն ազգաց եւ լեզուաց եւ ժողովրդոց: Զի երկրպագեսցեն նմա ամենայն որ բնակեալ են ընդ երեսս երկրի. որոց ո՛չ են գրեալ անուանք նոցա ի դպրութիւն կենաց Գառինն զենլոյ ի սկզբանէ աշխարհի: Ոյք ունին ականջս լսելոյ՝ լուիցեն: Զի են ոմանք՝ որք ի գերութիւն վարեսցին, եւ են ոմանք՝ որ սրով մեռցին, եւ են ոմանք՝ որ անձամբ զանձինս սպանանեն. ա՛ստ է համբերութիւն եւ հաւատ սրբոց» (ԺԵ. 15): Այստեղ «հայհոյեաց զանուն Նորա՝ եւ զխորանն Նորա, եւ զերկնային խորանն» կապակցութիւնը կարող է ենթադրութիւն առաջացնել, թէ լոկ աստուածամերժութեան դէպքերում է հայհոյութիւնը դիտուում իբրեւ բացասական երեւոյթ: Ուստի նախ պէտք է յիշել «հայհոյիչ» բառի համար Հայկազեան բառարանի տուած բացատրութիւնը. «Որ հայհոյէ. թշնամանիչ. նախատադիր Աստուծոյ, կամ սուրբ հաւատոյ, կամ մարդոյ: Բառարանի՝ Աստուած, հաւատ, մարդ միասնական շարքին պէտք է յարել, որ ըստ հոգեւոր բարոյագիտութեան մարդն ստեղծուած է Աստծու պատկերով ու նմանութեամբ (հմմտ. Ծննդ. Ա. 27), եւ նրա արժանապատուութիւնը պղծելը համարուում է Աստծու ստեղծագործու-

թեան անարգում: Այս համապատկերում սուրբ Օգոստինոսի խօսքերը թերեւս կարելի է հասկանալ ընդլայնուած իմաստով: Տարբեր ազգերի եւ նրանց սովորոյթների զանազանութեանն անդրադառնալով սուրբն ակնարկում է փոխադարձ յարգանքի անհրաժեշտութիւնը եւ Մատթէոսի է. 12-ը (Ջամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ ա՛յնպէս եւ դո՛ւք արարէք նոցա. զի ա՛յս իսկ են Օրէնքն եւ Մարգարէք) բերելով եզրափակում է «Քանզի ոչ ոք չի կամենում պղծել իր բնակարանը, ուստի նա չպէտք է պղծի Աստծու բնակարանը, այսինքն՝ իրեն [եւ իր նմանին]»⁷: Լեզուն զսպելու եւ սանձելու մասին է նաեւ Առակաց ժԵ. 1-ը իր յաջորդ համարներով, որ յատկաբար կրթելու եւ դաստիարակելու նպատակով են ստեղծուած («Պատասխանի ողոք՝ դարձուցանէ զսրտմտութիւն: Բան խիստ՝ յարուցանէ զբարկութիւն. Լեզո՛ւ իմաստնոյ գիտէ զբարիս: Բերան անզգամաց պատմեն զչարիս: Յամենայն տեղիս աչք Տեառն դիտեն զբարիս եւ զչարս: Բժշկութիւն լեզուի՝ ծա՛ռ կենաց. եւ որ պահեն զնա՝ լցցին հոգւով: Անզգամն՝ անգոսնէ զխրատ հօր. որ պահէ զյանդիմանութիւն՝ խորագէտ է»): Իսկ քրիստոնէական տեսանկիւնից չկշռադատուած, լրբաբարոյ եւ լկտի խօսքի վերաբերեալ քննարկումը թերեւս արժէ աւարտել Հին եւ Նոր կտակարանների վեցհատորանոց մեկնութեան հեղինակ Մաթիւ Հէնրիի (1662–1714) բացատրութիւններով, որ հեղինակը շարադրել է Յակ. Գ. 10-ի կապակցութեամբ: Նա նկատել է, որ յիշեալ տողերը «սովորեցնում են զգուշանալ անկառավարելի լեզուից՝ որպէս ամենամեծ չարիքից: Մարդկութեան գործերը խառնակուում են իրենց իսկ լեզուների պատճառով: Աշխարհի իւրաքանչիւր դարաշրջան եւ կեանքի իւրաքանչիւր հանգամանք՝ անձնական, թէ հասարակական, դրա վկայութիւններն են... Ոչ մի մարդ չի կարող լեզուն սանձել առանց Աստուածային շնորհի եւ օգնութեան: Առաքեալը դա չի ներկայացնում որպէս անհնար, այլ որպէս չափազանց դժուար... Ճշմարիտ կրօնը սայթաքումներ չի հանդուրժում. որքան մեղքեր հնարաւոր կլինեն կանխել, եթէ մարդիկ միշտ ուշադիր լինէին իրենց գործերին ու խօսքերին: Բարեպաշտ եւ արդարախօս լեզուն սրբացուած սրտի արդիւնքն է: Եւ նա, որ հասկանում է քրիստոնէութիւնը, չի սպասում լսել անէծքներ, ստեր, լկտիութիւն եւ հայհոյանքներ իսկական հաւատացեալի շուրթերից: Յա-

⁷ Տէմ St. Augustine, On Christian Doctrine, in Four Books, գլ. 14. https://ccel.org/ccel/augustine/doctrine/doctrine.xv_2.html#:~:text=For%20no%20one%20is%20willing,to%20do%20injury%20to%20another:

ւօք փորձն ապացուցում է, որ ոմանց աւելի շատ յաջողւում է զսպել իրենց զգայարաններն ու ախորժակը, քան պատշաճ կերպով սանձել իրենց լեզուները: Ուստի ապաւինելով աստուածային շնորհին, եկէք զգոյշ եւ զգօն լինենք խօսքերում եւ գործողութիւններում՝ օրհնելու, ոգեշնչելու, այլ ոչ թէ հայհոյելու համար»⁸:

Անշուշտ այստեղ պէտք է նկատել, որ զազրախօսութիւնն ու հայհոյանքը մերժելի է նաեւ միւս կրօններում: Օրինակ մահմէդականները հաղիսներէն գիտեն, որ իրենց մարգարէն ասել է. «Մուսուլմանը նա է, ում լեզուից եւ ձեռքից ապահով են մնացած մարդիկ»⁹: Կամ Սահիհ Թիրմիզի – Հադիս № 1977-ը սահմանում է. «Ճշմարիտ հաւատացեալը ո՛չ հայհոյող է, ո՛չ անիծող, ո՛չ գռգռիկ եւ ո՛չ անպարկեշտ»: Ղուրանը եւս (Սուրահ Ալ-Հուշուրաթ (49:11) յորդորում է. «Թո՛ղ մարդիկ չծաղրեն ուրիշ մարդկանց, քանի որ գուցէ նրանք (ծաղրուողները) աւելի լաւը լինեն, քան իրենք: Եւ թո՛ղ կանայք չծաղրեն ուրիշ կանանց, քանի որ վերջիններս գուցէ աւելի լաւը լինեն, քան իրենք»: Հայհոյանքի արգելքն իսլամում կրօնաբանական եւ բարոյագիտական դիտարկման ծիրում է: Իսլամական հաւատքի բարոյագիտական ներքին կառուցուածքում հայհոյանքը դիտւում է որպէս մերժելի եւ պարսաւելի, մեղաւոր խօսք: Օրինակ՝ Սուրահ ալ-Ան՛ամ 6:108-ում մուսուլմաններին յատուկ արգելւում է հայհոյել օտար դաւանութիւնների պաշտամունքի առարկաները («Եւ մի՛ վիրաւորէք այն ամենը, որ պաշտուած է ուրիշների կողմից, որպէսզի նրանք՝ չիմացութեամբ, հայհոյեն Ալլահին»): Այս պատուիրանը կարեւոր է ոչ միայն համամարդկային բարոյագիտական շարակարգում, այլ նաեւ անմիջականօրէն մերազնեայ խնդիրների պարագային, որովհետեւ այս պատուիրանի լոյսի ներքոյ պէտք է դիտարկուեն մեր բոլոր սրբութիւնները, որ պղծել են փաստօրէն իրենց ուսմունքի պահանջը ոտնահարելով:

Աստուածաբանական տեսանկիւնից վերոբերեալ տողում արտայայտուած է մահմեդականութեան կանխարգելիչ սկզբունքը, ըստ որի չար խօսքը կարող է դառնալ աւելի մեծ մեղքի պատճառ: Իսլամական աղբիւրների համապարփակ ծիրում՝ Ղուրանում եւ հադիսների ժողովածուներում, արձանագրուած է միանշանակ արգելք ոչ միայն կրօնական

⁸ Տե՛ս <https://biblehub.com/commentaries/james/3-10.htm>:

⁹ Սահիհ Բուխարի – Հադիս № 6031, հմմտ. Սունան ան-Նասայիի 4995:

հայհոյանքի, այլ եւ մարդկանց փոխադարձ վիրաւորանքի դէմ: Օրինակ՝ վերոյիշեալ Սուրահ ալ-Հուշուրաթ 49-ում, հրահանգուում է. «Մի՛ ծաղրէք միմեանց, մի՛ կոչէք նուաստացուցիչ մականուններով», ինչը վկայում է, որ լեզուի եւ խօսքի միջոցով իրականացուած նուաստացման ցանկացած ձեւ՝ անկախ դաւանանքից կամ հանրային դիրքից, մերժելի է: Բացի Ղուրանից, բազմաթիւ հադիսներում Մուհամմադ մարգարէն դատապարտում է հայհոյանքը: Հստ իսլամական նախնի աւանդոյթի՝ մուսուլմանին վիրաւորելը (այդ թւում՝ հայհոյելը) հաւասարեցուում է բարոյական անօրինութեան (Ֆուսուխ). «Մուսուլմանին հայհոյելն անօրէնութիւն է, իսկ նրա հետ կռուելը՝ անհաւատութիւն»¹⁰: Բնականաբար երբ շեշտուում է, թէ ո՛ւմ չի կարելի հայհոյել, պարզ է դառնում, որ բոլոր միւսները վտանգուած են: Սակայն հադիսներում ընդգծուում է յատկաբար բարին խօսելու անհրաժեշտութիւնը. «Խօսիր բարի բաներ կամ լռիր»- «Ով հաւատում է Ալլահին եւ վերջին օրուան, թո՛ղ բարի բան ասի, կամ լռի»¹¹: Այստեղից կարելի է եզրակացնել, որ իսլամական բարոյագիտութեան եւ կրօնական իրաւունքի տեսանկիւնից՝ ոչ միայն կրօնական, այլեւ մարդկային արժանապատւութեան դէմ ուղղուած հայհոյանքն անթոյլատրելի է: Այդ արգելքն ունի թէ՛ աստուածաբանական հիմք՝ Աստծուն ուղղուած հնարաւոր չարախօսութիւնը կանխելու նպատակով, թէ՛ հանրային-գեղագիտական նշանակութիւն՝ հասարակութեան մէջ փոխադարձ յարգանքի եւ համերաշխութեան պահպանման տեսանկիւնից:

Յուդայականութեան մէջ հայհոյանքը համարուում է ծանր մեղք եւ խստօրէն արգելուում է դրա կիրառութիւնը՝ ինչպէս Աստծու, այնպէս եւ մարդու վերաբերմամբ: Աստուածային պատուիրաններից մէկը՝ «Քո Տէր Աստծու անունը զուր տեղը բերանդ չառնես, որովհետեւ Տէրն Իր անունը զուր տեղը բերանն առնողին անպատիժ չի թողնի»¹² (Ելք Ի. 7), հրէական աւանդութեամբ մեկնաբանուում է ոչ միայն որպէս Աստծու անուան անտեղի օգտագործման արգելք, այլեւ՝ որպէս նախազգուշացում լեզուական սրբապղծութեան դէմ: Թալմուդում բազմիցս շեշտուում է խօսքի հանդէպ պատասխանատու վերաբերմունքը. օրինակ, Ավօտ-ում նշուում է՝ «Լաւ խօսքը

¹⁰ Հմմտ. al-Bukhari, Muhammad ibn Isma'il. Sahih al-Bukhari. Book of Faith (Kitab al-Iman), Hadith no. 48. Muslim, Ibn al-Hajjaj. Sahih Muslim. Book of Faith, Hadith no. 64.

¹¹ Sahih al-Bukhari, Հադիս հ. 6136, Sahih Muslim, Հադիս հ. 47:

¹² Մի՛ առնուցու զանուն Տեառն Աստուծոյ քոյ ի վերայ սնոտեաց. զի ո՛չ սրբեսցէ Տէր զայն, որ առնուցու զանուն նորա ի վերայ սնոտեաց:

կեանք է բերում, իսկ չար լեզուն՝ մահ»¹³: Բացի այդ, գոյություն ունի «լաշոն հառա» (չար լեզու) հասկացությունը, որը ներառում է զրպարտություն, բամբասանք եւ վիրաւորական խօսք, դիտում է որպէս բարոյական մեղք, որն ի զօրու է խարխլել համայնքային եւ հոգեւոր կեանքը: Յուդայական բարոյագիտութեան հիմքում մաքրական-սրբեալ լեզուի հանգամանքն է՝ որպէս մարդ-Աստուած յարաբերութեան արտայայտություն¹⁴: Բաբելոնեան Թալմուդի Արախին բանագրությունը (15բ) սահմանում է. «Յանկացած մէկը, որ զրպարտութիւն է խօսում, նոյնն է, թէ Աստուծո գոյութիւնն է ժխտում»: Ինչպէս կարող ենք տեսնել ներկայ հատուածում չար լեզուն հաւասարեցւում է աստուածուարացութեան, եւ կարելոր է, որ քաղեալը յաճախ մեկնաբանւում է որպէս բարոյագիտական զգուշացում վիրաւորական խօսքի դէմ¹⁵: Չար խօսքին բազմիցս անդրադարձել են նաեւ հրէա ուսուցիչները: Ի մասնաւորի ուսուցիչ Իսրայէլ Մէիր Կահան, իր «Խաֆէց Խալիմ» երկում, մանրամասն նկարագրել է «լաշոն հառա» (չար լեզու) երեւոյթը: Նա ընդգծել է, որ վիրաւորական, բամբասող կամ ոչ բարեացակամ խօսքը հրէական բարոյագիտութեան մէջ դիտւում է որպէս ծանր եւ անմեղելի մեղք, յատկապէս երբ այն ուղղուած է մարդու արժանապատւութեան եւ համայնքային համերաշխութեան դէմ: Ընդ որում «լաշոն հառա» կապակցութեամբ հասկացւում է թէ՛ արտաբերուած, թէ՛ գրաւոր, թէ՛ շարժում-նշանների միջոցով արտայայտուած բացասական, չար «տեղեկութիւնը»¹⁶:

Բուդայական բարոյագիտութեան համաձայն՝ այդ կրօնի հետեւորդն իրեն պահում է ճշմարտախօսութեան եւ լեզուական զսպուածութեան սահմաններում: Բուդայականը խուսափում է սուտ խօսքից: Նա խօսում է արդար, հաւատարիմ է ճշմարտութեանը, վստահելի է, յուսալի, չի խաբում աշխարհին: Նա խուսափում է չարամիտ խօսքից, կոպիտ ու վիրաւորական խօսքից, ինչպէս նաեւ դատարկ եւ անիմաստ խօսքերից¹⁷:

¹³ *Տէւ* Avot 15:1:

¹⁴ *Տէւ* PLAUT, W. GUNTHER (ED.). The Torah: A Modern Commentary. Union for Reform Judaism, 2005:

¹⁵ *Տէւ* Steinsaltz, Adin. The Talmud: A Reference Guide. Random House, 2009:

¹⁶ *Տէւ* «This issue of lashon hara obtains whether it is actually spoken by mouth or stated in a letter. There is also no difference whether he speaks it explicitly or by sign. In all modes, it is in the category of lashon hara». *տէւ* https://www.sefaria.org/Chafetz_Chaim%2C_Part_One%2C_The_Prohibition_Against_Lashon_Hara%2C_Principle_1.1.1?lang=bi&with=About&lang2=en:

¹⁷ *Տէւ* DĪGHA NIKĀYA I.1.1 (Brahmajāla Sutta), *անգլերէն թարգմանությունը*՝ M. WALSHE, The Long Discourses of the Buddha: A Translation of the Dīgha Nikāya, Wisdom Publications, 1995, էջ 67–68:

Ուշագրաւ են նաեւ բուդդայականութեան 10 պատուիրանները¹⁸, որոնցից առաջինը մեզ համար աւելի ընկալելի ձեւակերպմամբ կստանայ «Մի՛ սպանաներ», երկրորդը՝ «Մի՛ գողանար», երրորդը՝ «Մի՛ շնար» ձեւերը: Իսկ չորրորդը բառացիօրէն հնչում է՝ «Ես ստանձնում եմ պատուիրանը՝ զերծ մնալ սխալ խօսքից» ձեւով, որտեղ «սխալ խօսք» ասելով ուսմունքի հետեւորդները հասկանում են՝

- ա) պատիր (ուրիշին խաբող, մոլորեցնող),
- բ) զրպարտող, (մարդկանց իրար դէմ հանող խօսք),
- գ) Կոպիտ կամ վիրաւորական խօսք (հայհոյանք, նուաստացում),
- դ) Դատարկաբանութիւն (անիմաստ, սին կամ բամբասանք պարունակող խօսք):

Հետեւաբար «Ես ստանձնում եմ պատուիրանը՝ զերծ մնալ սխալ խօսքից» խոստումը աւելի հեշտ կլինի նմանեցնել Ելից ԻԲ. 28-ի հետեւեալ՝ խմբագրուած տարբերակին՝ «մի՛ բամբասիցես, մի՛ հայհոյեսցես»:

Հինդուիզմում խօսքը դիտուում է որպէս ուժ եւ բարոյական պատասխանատւութիւն ենթադրող միջոց: Դարամայական *բնագրերում՝ Հին Հնդկաստանի* կրօնա-բարոյական օրէնագրքերում՝ *ի մասնաւորի՝ Մանուսմրիտի-ում* եւ *Բհագավադ Գիտա-ում*, յստակ ընդգծւում է, որ խօսքը պէտք է լինի ճշմարիտ (*satya*), բարեհամբոյր (*priyam*), օգտակար եւ արդար: Խստօրէն դատապարտուած են հայհոյանքը, վիրաւորական եւ կոպիտ լեզուն, որոնք դիտոււմ են որպէս *adharma*՝ բարոյական կարգի խախտում: Մանուսմրիտի 4.138-ում նշւում է. «Թող մարդ խօսի ճշմարտութիւն, հաճելի բաներ ասի եւ խուսափի կամ սուր ճշմարտութիւնից, կամ հաճելի ստից»: Հինդու բարոյագիտութեան համաձայն՝ չարախօսութիւնը վնասում է ոչ միայն շրջապատին, այլեւ խաթարում է մարդու ներքին հոգեւոր ներդաշնակութիւնը եւ խոչընդոտում է նրան դէպի օրինապաշտ (դարմիկ) կեանք՝ հոգեւոր ազատութեան (մոկշա) տանող ճանապարհին¹⁹:

Մագդեղականութիւնը, որ հիմնուած է Զրադաշտ մարգարէի պատգամներին, առանձնակի կարեւորում է բարոյական, հաւասարակշիռ խօսքը: Այս կրօնում խօսքը դիտուում է ոչ միայն որպէս հաղորդակցման միջոց, այլ՝ հոգեւոր ընտրութեան ու բարոյական կողմնորոշման դաշտ, որտեղ

¹⁸ Տե՛ս <https://www.accesstoinight.org/ptf/dhamma/sila/dasasila.html>:

¹⁹ Հմմտ. Manusmṛti 4.138. «Թող մարդ խօսի ճշմարտութիւն, հաճելի բաներ ասի, բայց չասի ցաւեցնող ճշմարտութիւն կամ հաճելի սուտ: Սա է յաւերժական դճարման», Bhagavad Gītā, 17.15. Bhagavad Gītā. The Holy Bhagavad Gita, թարգմ. S. Tejomayananda, Chinmaya Mission Trust, 1999:

մարդն իր կամքով ընտրում է լոյսի եւ ճմարտութեան, կամ խաւարի եւ կեղծիքի ճանապարհը: Զրադաշտականութիւնը խարսխուած է «Լա՛ւ մտածիր, լա՛ւ խօսիր, լա՛ւ գործիր» բարոյախօսական սկզբունքին:

Զրադաշտական ուսմունքը ներկայացնում է բարու եւ չարի պայքարը՝ Ահուրա Մազդայի (լոյսի աստուած) եւ Անգրա Մայնուի / Ահրիմանի (չարի սկզբունք) հակադրութեամբ:

Սուտ խօսելը, վիրաւորական կամ պղծող խօսք արտաբերելը, բամբասանքն ու կեղծ վկայութիւնը համարւում են Ահրիմանի՝ խաւար ուժերի դրսեւորում: Հետեւաբար, երբ կարդում ենք Աւեստայի՝ մարդուն դիւանային ուժերից՝ սուտից, պղծութիւնից, շարութիւնից պաշտպանող Վենդիդադ բաժինը (4.43) եւ հասնում ենք՝ «Ով սուտ է խօսում՝ պղծում է իր հոգին եւ խոցում աշխարհը» տողին, կարող ենք պատկերացնել նաեւ յարակից շարքը՝ վիրաւորական կամ պղծող խօսք արտաբերելը, բամբասանքն ու կեղծ վկայութիւնը: Զրադաշտին անդրադառնալիս չենք կարող չլիշել պատմաբան, հնագէտ Զէյքօբ Բրեանթի (1715–1804) վկայութիւնը, թէ այս մարգարէն ծնունդ էր Հայաստանում: «Զրադաշտի մասին պատմում են, թէ առանձնացաւ մի լեռան վրայ, ուր շփուեց աստուածութեան հետ, եւ լեռը հրով պատուեց, մինչդեռ Զրադաշտը բոցերի միջից յայտնուեց անվնաս»: Այնուհետեւ Բրեանթը շարունակում է. «Պարսից հեղինակների վկայութեամբ, այն վայրը, որտեղ նա [Զրադաշտը] ապաստան գտաւ, Ադարբային կոչուող շրջանում էր, որտեղ հետագայում գտնւում էր Ասիայի ամենամեծ Պուրաթէնը²⁰: Այս շրջանը էր Հայաստանում էր, եւ ոմանք կարծում են, որ նա [Զրադաշտը] ծնունդ է ունեցել երկրում՝ Կորդուաց լեռներից մէկում»²¹:

Իբրեւ անհամեմատ նոր ձեւաւորուած կրօնական ուսմունք ուշագրաւ է սիքհերի հաւատքը, որ գրեթէ նոյնպիսի վերաբերմունք ունի հայհոյանքի հանդէպ, ինչ հին կրօնները: Սիքհիզմն ընդհանրապէս խրա-

²⁰ Յունարէնից (πυραθείον) ծագող այս բառը կրակը պաշտելու տեղ է խորհրդանշում: Տեղին է լիշել, որ բնական վառելիքի պաշարներով հարուստ Ատրպատականում կրակը յաճախ ինքնաբոխ դուրս էր գալիս գետնի տակից, ու թերեւ տեղանունան հէնց այս՝ կրակով պատուած լինելու հանգամանքով ստուգաբանութիւնն է ընդունելի, ուր արմատներն են աւար (կրակ-հմտ. ատրճանակ, ատրուշան, ատրագոյն) եւ պաւ (պատել, պատուած). հմտ. Հր. Անառեան, Հայերէն արմատական բառարան, Երեւան, 1971, հտ. 1, էջ 289:

²¹ Տե՛ս JACOB BRYANT, A New System; or, an Analysis of Antient Mythology, vol. II, London, 1774, էջ 118, հմտ. «Դրուագներ Հայոց պատմութեան եւ բանահիւսութեան», գիրք. Ա., Երեւան, 2017, էջ 108:

խուսում է կշռադատուած խօսքը՝ խօսողի եւ խօսակցի արժանապատուութեան սկզբունքով, մինչդեռ հայհոյանքը խայտառակութիւն է բերում: Ուստի առաջնային պայման է՝ «Խօսիր միայն այն, ինչ պատիւ պիտի բերի քեզ»²²: Այս կրօնի հետեւորդների ուսուցիչները սովորեցնում են, թէ՛ «Սին են այն խօսքերը, որ հնչում են հպարտութեամբ եւ եսամոլութեամբ: Այդ խօսքերը տանում են ցաւի եւ տառապանքի», եւ «Լեզուն, որ կոպտում է, պիտի կտրուի»: Սակայն «Մի՛ արտասանի անգամ մի կոպիտ բառ. քո ճշմարիտ Տէրը եւ Վարդապետը բնակում է բոլորում»²³:

Ինչպէս տեսանք հիմնական գաղափարի վերաբերեալ բոլոր կրօնները նոյն վերաբերմունքն են դրսեւորում: Խօսքը հոգու շունչն է, լեզուն՝ մարդու բնութեան արտացոլումն ու կամքի գործիքը: Խօսքով մարդը կարող է սփռել լոյս, մեղմել դիմացինի ցաւը, վերքերն ապաքինել, ուղղակիօրէն փրկել, բարութիւն-բարիք գործել, բայց եւ վիրաւորել, ոչնչացնել եւ խորտակել: Ուստի կարեւոր է, որ հիմնական կրօնական ուղղութիւններն ուսուցանում են չափաւոր եւ կշռադատուած խօսք հանդէս բերել, եւ բնականաբար սրան հակառակ բարքով օժտուածը հեռու է աստուած-ճանաչողութիւնից, ուստի որեւէ կրօնական ուսմունք նրան չի կարող առապազան յոյս ներշնչել: Առաւել ծանր է նրանց կացութիւնը, որ անկարող են կամ չեն ուզում ճանաչել մեղքը, որ ճշմարիտ զղջման եւ ապաշխարութեան ճանապարհի սկիզբ կարող է հանդիսանալ:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայհոյութիւն, վիրաւորանք, պղծութիւն, քրիստոնեայ, իսլամ:

РЕЗЮМЕ

В статье рассматривается богословское, нравственное и антропологическое осмысление хулы и сквернословия в контексте армяно-христианской традиции

²² Guru Granth Sahib, էջ 15:

²³ Հստ հերթականութեան՝ Guru Granth Sahib, էջ 1373, էջ 1363, էջ 92 (գրքի բոլոր տալագրութիւնները պահում են աւանդական էջակալումը, ուստի նշել ենք միայն էջերը):

и в сравнении с другими мировыми религиями. Авторы раскрывают роль разума и слова как признаков Божественного образа в человеке и подчеркивают, что злая и нечистая речь — это не просто моральное отклонение, но духовная болезнь, искажающая природу человека. На основе библейских, святоотеческих и классических армянских источников анализируется, как хулительное слово отрывает личность от Бога и лишает ее благодати. Далее проводится сравнительный анализ учений ислама, иудаизма, буддизма, индуизма, сикхизма и зороастризма, которые также осуждают злобную и вредоносную речь. В статье утверждается, что этическое регулирование речевого поведения — это нравственная обязанность человека, а благословение, а не проклятие, — его истинное призвание.

SUMMARY

This article explores the theological, moral, and anthropological understanding of blasphemy across major world religions, with a focus on the Christian (Armenian Apostolic) tradition. Beginning with the central role of reason and speech in the divine image of humanity, the authors examine how unrestrained, offensive, and blasphemous language distorts this image and separates the individual from divine grace. Drawing on Scripture, Patristic thought, and classical Armenian sources, the study emphasizes that blasphemy is not merely verbal misconduct, but a spiritual corruption rooted in pride, anger, and moral disintegration. The article further expands the scope by offering a comparative overview of Islamic, Judaic, Buddhist, Hindu, Sikh, and Zoroastrian teachings on offensive speech, illustrating a universal moral consensus on the sanctity of language. It concludes that safeguarding speech is an ethical imperative, echoing the wisdom of sacred traditions that blessing, not cursing, is the true vocation of the human tongue.

